

այնքան մեծ էր աւերն անոնց մէջ: Պատ-
 յանդգնեցաւ մինչեւ անգամ հայ մենաս-
 տանաց աստուածանուէր կուսանքը խայ-
 տառակութեան մատնել (Փաւս. 228), ինչ-
 պէս Հոովմայ հեթանոս կայսերը կը վա-
 րուէին քրիստոնէից հետ: Մանդակունին
 յատուկ ճառ մ'ունի երրեակ անբնական
 եւ անասելի պղծութեանց դէմ (142), յու-
 րում ճշմարիտ «սարսուռ» մը կը զգայ
 ի տես այդ քարուականութեանց. եւ կ'ի-
 մացնէ՝ թէ «առաւել զեռաւ այս ամբա-
 րըշտութիւնս քան զամենայն չարութիւն
 անօրէնութեան ախտից» (144). եւ զոր ա-
 նուշադիր չի թողուր Յաճախապատումն
 ալ (69): Գր. Նարեկացին իւր ժամանա-
 կակցաց դէմ եւս ունի շատ ծանր ամբաս-
 տանութիւններ սոյն կարգէն, զորս կ'ակ-
 նածէ մանր պատմել (503): Բարեպաշտ
 անձինք գայթակղած, իրարու ականջէն եւ
 իրենց թղթակցութեանց մէջ գաղտնաբար
 մատնացոյց կ'ընէին այդ ախտից մեծա-
 շուք սպասարկունները (Մագ. 15, 59, 63,
 69): Եւ մեր եկեղեցական կանոնները լի
 են ազոնց դէմ շանթերով: Մոռնալու չենք՝
 որ սոյն խայտառակութեանց դէմ իրենց
 մղած պատերազմին զոհ գնացին Յուսիկ,
 Դանիէլ եւ Ներսէս: